

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մարտի 20-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը << ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ – 26/18>>

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ կարիքների համար **օպտիկական գործիքներ** ձեռքբերման նպատակով կազմակերպված << ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ – 26/18>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2026թ. մարտի 20-ին** ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ **2026թ. մարտի 20-ին** տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

1-ին չափաբաժնի վերաբերյալ.

Հրավերի տեխնիկական բնութագրում խնդրում ենք մանրամասնել, թե ինչ աշխատանքների համար է նախատեսված Littrow լազերային համակարգը, քանի որ արտադրող ընկերությանը պետք է տրամադրել տեղեկատվություն վերջնական օգտագործողի մասին, ինչպես նաև թե ինչ աշխատանքներ են իրականացվելու տվյալ համակարգով:

Պարզաբանում N 1

420 նմ ալիքի երկարությամբ և 0.5 ՄՀց սպեկտրալ լայնությամբ նեղաշերտ դիոդային լազերի միջոցով կուսումնասիրվի Ռուբիդիումի ատոմի գոլորշու 5S6P3/2 ատոմային անցումը: Կօգտագործվի նանոբջիջ՝ 50-300 նանոմետր գոլորշու սյան երկարությամբ: Մասնավորապես, 50-300 նմ փոքր հաստությունների դեպքում աշխարհում առաջին անգամ կուսումնասիրվի վան դեր Վալսի էֆեկտի պատճառով 5S-6P3/2 ատոմային անցման հաճախականության տեղաշարժը: 5S-6P3/2 ատոմային անցման հաճախականության տեղաշարժը, ենթադրաբար, կլինի 10-100 ՄՀց տիրույթում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել << ՖՀԻ-ԳՀԱՊՁԲ – 26/18>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վեներա Բալասանյան:

Հեռախոս՝ +374 10 288150 +374 55 81 04 87

Էլեկտրոնային փոստ՝ ifi@ipr.sci.am, gnumner.iphi@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ